

Բ. ՍԵՅՐԱԿԻՑԱՆ

ՔԱՐԱՓԻ ԿԱԾԱՆԸ

891.542-32

Ա-39



8

891.542-32

891.99
Ա-39

891.542-32

Մ-39

19 NOV 2011

Պրոլետարիատ քույր յերկրների, միացե

№ 8

ՊՐՈԼԵՏԱԿՈՒԻ

ԳԵՂԱԿԱՐԿԵՍԱԿԱԿԵ ԳԵՂԱՎՐԱԿԵ
ՄԱՍՄԱՅԱԿԱԿԵ ԳՐԱԴԱՐԱՆ

1009
390/8

ԲԵՆԻԿ ՍԵՅՐԱՆՅԱՆ

4018

ՔԱՐԱՓԻ ԿԱԽԱՆԸ



1935

Գառա Խոմբ՝ Ա.Դ. ՎԱՐԴԱՍԵՅԱՆ
Թողարկիչ՝ Ս. ԴԱՎԱՄԹՅԱՆ

ՔԱՐԱՓԻ ԿԱԾԱՆՑ

Դեռ այժմ ել Սինամ ձորակում բլթող աղբյուրն ավազի մանրիկ հատիկներ ե հանում դետնի տակից, և աղբյուրի չուրջը փարթամությամբ աճող ջրախոտի մեջ արձաթազո՞ծ տերեններով բարձրանում ե գաղձը: Աղբյուրի փոքրիկ լճակները գարնանը սերակալում են ջրամամուրի կանաչ շերտով և այդ լճակների մեջ դորտի մանրիկ շերեփուկներն են խայտում ու կետերի պես:

Սովորություն եր, թէ՞ սրտի ցանկությունն վոր Հեշտաց Աթին կոլխոզի տավարն իրիկնապահին ուրթը բերելու ժամանակ նստում եր Սինամ ձորակի գրլիխն՝ միշտ նույն տեղն ու հայացքը ձգում Ահլու ձորի բերանը: Հեշտաց Աթին այնպիս եր թվում, թէ Գիգոլն ել ե նստել այդ նույն տեղը, յերբ հորթարած եր սարում: Նստել ե, նայել ձորին ու կլոր քորեր ե գլորել Սինամ ձորակով ցած:

Այնպես զեռ այժմ ել աղբյուրի ջուրը տեղ-տեղ ծծվում ե սեահողում, հողը ծածկվում ե թափ կանաչով, փորի մեջ դալար ցողուններ են բարձրանում ձվի չափ կոկոններով: Հետո պատովում են այդ կոկոններն ու արևածաղկի պես բացվում նարգիզը՝ թէ-մերը բրոնդի կտոր, սպին՝ վոսկե թափից:

Ո՞վ գիտե Գիգոլն ինչքան ե իջել ձորակով ցած՝ կորած հորթերին ման գալիս: Իջել, հասել ե այնտեղ, ուր ձորակի թեք կողմերը քանցվում են մոշենու գետնատարած ճյուղերով, զարաղաթի ու գերամաստու գանգուր թփուաներով, գտել ե կորուստն իր ու այդ թփուաների մեջ պառկած ծառի խոնավ կեղե-

վի վրայից սունկ ե քաղել՝ սաշափի կոճակների պես
շարժած:

Եերբ ծառակուտուտը կտցահարել և ծառը, մո-
շահավը թռել ե Գիգոլի վոտնաճայից, մոշահավը՝
գույնը մազութի պես ու, վզին սպիտակ պուտեր,
յերբ թռել ե աղմուկով – Գիգոլը ցնցվել և տեղից,
ձեռքի փափախն ընկել և ցած ու սունկը խառնվել ե
դեղնած խաշամի հետ:

Միշտ այսպես մտածում եր Հեջանց Աթին և զա-
րաղաթի զույգ հատիկների պես արցունքի կաթիլներ
եյին ծորում նրա կապտափուն աչքերից; Հետո բարձ-
րացնում եր գլուխն ու նայում հանդչող վերջալույ-
սին: Հորիզոնի սպիտակ ամպի կարմրազոն յեզրը
վո՞րքան նման եր Գիգոլի արյունոտված վզին: Իսկ
գորշ ամպերի հետ տեղ-տեղ խառնված կարմիրը, Հե-
ջանց Աթին այնպես եր թվում, թե Գիգոլի ցեխակո-
րու շապկի վրայի լերդ-լերդ մակաղած արյունն ե:

— Դոստությունով զնացել են, գուշմանություն
արել, — միշտ կրկնում եր նա, հետո անշարժ բիբերն
աննկատ լայնանում եյին և անզուսպ զայրույթով
պատում ամբողջ մարմինը:

* * *

Են տարի գարունն աննկատ յեկավ, բոխենու դա-
յար ճյուղի վրա աննկատ պատուց կոկոնն ու կանաչ
շրջապեսարի պես բացվեց սալարթը: Կեռասենին մի
դիշեռվա մեջ սպիտակաթերթ ծաղիկներ հաղափ, ցո-
ղակոլու աչքերով նայեց չուրջը: Լեռների սոսորոտնե-
րում ձնայից սրբնթաց առվակներ հորդեցին, գետն
իր ընթացքով չափ առափ ռաշ ձիու հանգով ու մար-
մանդ հով բերեց հեռու լեռներից: Զափարների տակ
մաղակալեց յեղինջը, կալերում բարձրացափ ավլուկը,
ափսեածն տերևներով կանաչեց փիփերթը:

Իսկ Հեջանց Աթին ու քաչալ Գիգոլն են տարի ին-
չի մասին ել զրույցի բռնվեցին, խոսակցության նյու-
թը պատվեց ու կանդ առափ նոր հիմնադրվող կոլոո-
դի վրա:

— Տան տեր մարդ ես, Աթի, — միշտ աշխատեց հաշ-
մողել Գիգոլը, — դու վասդ կուլակ Աթելի հետ եւ
մեկնո՞ւմ... Սիր նրա բանը պըծած ա ե՛... Դու են
փիփերթն ես, նա են բանջարը, հասկացա՞ր... ասեց
ու մատնացույց արեց չափարի տակը:

— Դու մտել ես, հւա մի ապրի...

— Ապրած մոչ՝ խո մեռնում չեմ... Հրես մաշ-
նեքն ել մոր եկան, պըծածվ...

— Ի, քաչալ մեռած զյոզլա^{1*)})...

— Զե՛, Հեջանց Աթի, դու Աթելի դուռնի տակին
սպար արի...

Աթին վիրավորմիելու դեպքում, ոճից խայթվածի
պես զատկում եր տեղից, մի պահ անխոս ճաճպաց-
նում աչքերը: Ճակատին ցուցամատի հաստությամբ
մի յերակ եր ուսչում՝ կարծես ճիպոտի հարվածից,
ու դողում եր ներքուի չուրթը: Իսկ խոսակցության
ժամանակ նրա ամբողջ մարմինը չարժողության մեջ
եր լինում: Դիմացինին թվում եր, թե նրա ձեռքերն ել
են խոսում, վոտքերն ել, քերանն ել...
Իսկ զիխավորը՝ նա այնքան վարպետություն եր ձեռք
բերել այդ շարժումների մեջ, վոր հաճախ մինչև
խոսելը մարմնի արագ շարժ ու ձեւերով դիմացինին
հասկացնում եր ասելիքը: Նա նույնիսկ սեփական կի-
սառուսափառը նախադասություններ ուներ: Զգաց-
նանալու դեպքում հարկ եր համարում մի յերկու
«չորտնի մախորկի» ուզզել հակառակորդի հասցեյին,
կամ «դուրակով եշակ» անվանել նրան: Իսկ յերբ այդ
ես չեր հանդատացնում նրա բարբորքած ջղերը, ա-
պա նա ջրոտած ջրաղացի պես իջեցնում եր խոսակ-
ցության տոնը և հարգելոր շեշտով կրկնում.

— Զե՛ բալամ... Գնա գլուխդ ծակիլ տու, ծառ-
բալ խելք ածա... Թե չե, վա՞յ քու քուլիմաթին...

Բայց այսու հանդերձ Գիգոլի վիրավորանքն այն-

*) Թուղքերն - աչկ պահիր:

քան ուժեղ եր, վոր Աթին Հարմար պատասխան չը-
գանելով թքեց ու հեռացավ նրանից :

Հեջանց Աթինի ու քաշալ Գիդոլի այս վեճը պա-
տահական չեր : Ճիշտ ե, նրանք մանկությունից մտե-
րիմ ընկերներ են յեղել, չեմ քշեմքի դրկիցներ, բայց
առրիներ առաջ, ինչ վոր խոտի պատմությունից
ծնունդ եր առել այդ վեճն ու աթարի անթեղի պես
մըում եր Աթինի սրտում : Այդ պատճառով ել նրանք
շարաթը մեկ անդամ կովում, խղում ելին Հարևանա-
կան բոլոր կապերը, հետո Հաշավում ու նորից զրոյ-
ցի ելին բանվում Աթինի տան Հարթ կտուրին :

Մի ժամանակ Աթինի խոտի «մասալեն» հոլովկում
եր գյուղի Հարսանիքներում, խնձույքներում և իր ո-
քինակնի պատմողներն ուներ : Աթին լավ զիտեր,
վոր քաշալ Գիդոլն առանձին ուանդավորումով և պատ-
մաւմ այդ ամենը : Մեկ անդամ նույնիսկ իր ներկա-
յությամբ պատմեց :

— Դու Հալա զնա քաշալ զիմսիդ դեղ արա՞...
Զարբացավ Աթին ու մտքի մեջ հայհոյելով Հեռացավ :
Իսկ հետևյալ որոր յեր լսեց, վոր Գիդոլի միակ կովը
հորթատել ե, առանձին բավականություն զգաց :

Այդ գեղքի տարին Հեջանց Աթին իր խոտՀարք-
ները հնձելուց, խոտը գոմահանդ տեղափոխելուց հե-
տո, սովորության համաձայն դերանդին ունե առավ,
չքից հանդի ծայրամասերը, անտառի մեջ թաղնված
բացատները . քերանք արավ ու տան առաջ մի փոք-
րիկ դեղ կանգնեցրեց վաճառելու համար : Գարնանա-
մուտին քաշալ Գիդոյն ու մյուս Հարևանները վորոշե-
ցին այդ խոտը զնել, սակայն յերկար սակարկելուց
հետո Հրաժարվեցին : Աթինի ցանկության Հակառակ
դարձուր շատ շուտ յեկամ ու նրա խոտը մնաց :

Աթին ամեն առափառ բացում եր գուռն ու ձնա-
ջրից սևացած դեկն որ-որի փոքրանում եր նրա աչ-
քաւմ : Վոչխարը ձնել եր արգեն ու կամաց արոտի
մեր դուրս դադիս : Քաշալ Գիդոլն իր յերկու վոչխա-

ըըն ու կովը քշում եր նրա կալի միջով ու քթի տառէ
ժպտալով, խեթ նայում խոտին : Մի որ ել հանդից
զալիս մանիշակի փունջ կապեց Գիդոյն ու տուն ըե-
րելով գաղտնից ցցեց Աթինի դեղի լանջին : Յերեկոյան
գեմ, յեր մոտ հարևանները գարձյալ զրուցում ելին
Աթինը տան զլիսին, Գիդոլը, իբր պատահմամբ, հա-
յացքը դցեց գեղին ու դարձավ խոսակիցներին .

— Տղերք, են ի՞նչ ա... .

— Պահ... ժպտացին բոլորը :

— Խոտը ծաղկել ա՞... Մանիշակը դուրս ա կ-
եկլ...

Եսպես ծիծաղեցին ու անցավ, ինքը՝ Աթին եւ
ժպտաց :

Եգ դիշեր մի կատաղած բուք բարձրացավ,
մինչև յույս բավական ձյուն նստեց : Առավոտը գյու-
ղացիներից շատերը ոժվարությամբ բացեցին զոներն
ու մարադի վերջին կոճոնքը Հավաքելով լցրին անտ-
ուռների սուածը : Գիդոյն ել քթոցն ուսն սուած, դի-
մեց այս ու այն հարևանին, բայց մոչինչ չճարեց :
Բաղցած կովը բաւաշում եր գոմում, իսկ նոր ձնած
վոչխարները մայում ելին լացող յերեխանների նման :
Վերջում Հավաքեց գրկիցներին ու Հանցալորի քայ-
երով շարժվեց դեպի Աթինի կալը :

Աթին մաքրում եր տան կոռուրը : Յերբ նկատեց
յեկոյներին, քթի տակ գառը ժպտաց ու ձեռքի
թիու ամեն մի շարժման հետ ինքնագուհ կրկնեց .

— Հա՛, խոտը ծաղկել ա... Հա՛, մանիշակը
դուրս ա եկել...

— Աթի, — ձայն տվեց Գիդոլը, — մի դեսը կտղ-
նի...

— Ինչա՞ , խոտը ծախում չեմ, — պատառիսանեց
Աթին ու գլուխը դարձյալ իջեցնելով, շարունակեց
գործը :

Գյուղացիները Հառկացան նրա մեռքը, երենք

մատեցան Աթինքն։ Նախ աշխատեցին համոզել, թե ի-
վար և կատակից այդքան նեղացել, և ապա խնդրե-
ցին գնահատի խոսը։

- 80 մանեթ ա, ուզում էք առեք...
- Այ մարգ, երեխա չես ախր...
- Ախր մախր չկա... ետա...

Գյուղացիներն ստիպված ցրվեցին, իսկ ձյունը
զալիս, հա զալիս եր։ Յեվ յեթե ձյան շերտը մատ-
նեմասն եր բարձրանում, Աթինի խոսի զինը՝ 5-10
ոուրլով։ Հարհաններից մեկը ստիպված քանդեց իր
մարտի դրուխն ու սեացած գարմանը բաժան-բա-
ժան արեցին։ Աթին այդ զիշեր մեծ հաճույքով նո-
յեց մթնած յերկնքին, չարունակվող ձայնը և մի բա-
ժակ ողի կուտ տալով, հանդիսա քնեց։ Հետեւյալ որը
նա իր խոտի աեզ մոխրի մի կույա տեսավ։ Մըթիմը-
թաց, թքուեց, աղմուկ-աղաղակ բարձրացրեց, հետո
Գիգրվց ու մյուս հարհաններից գանդառտվեց, բայց
չկարողացավ հաստատել ու գործն արդառել մեջ մնաց։

Ահա այդ որփանից եր ծնունդ առել յերկու հա-
րեանների անհաշմառելյունը։

Են գարնանն ել եսպես վիճեցին — վիրավորեցին
իրար, յերկու որ խոռով մնացին, իսկ յերբորդ որն Ա-
թին կացնի, կամ ուրագի պատրիակով հաշտվեց Գի-
գոյի հետ։ Մեկ անդամ ել զրույցի ժամանակ Գիգոյի
մի անգույշ կատակից Աթին վեր ցատկեց տեղից ու
գարձավ նրան։

— Արա, դե արի ու ասիլ մի... Քու համար մի՞ւ
ա... «քոռ յա բուրդա», յե բաղդադատա»... Համա իմ
գուրիաթը սարի սալոր ա ե... Յես վոնց կոլերս
առմ կոլիսողին ու երեխես ցամաք պահեմ...»

— Յանի եղ ո՞ւմ զուռնի տակին ես ծուլ ըլում, —
Հանդիսա տանով հարցրեց Գիգոլը։

— Զե՞, յե իմ չօրս կովը բերեմ քի պես լրթկո-
տի զարուն կոմի հետ խառնեմ...»

— Հեշանց Աթի, չափու հանաչի, եղ մին, մինն ել

ո՞ւմ հաշվին ես կովատեր դառել, մեր պետության,
թե՞ քու կուլակ Աթելի...

— Իմ ատվակա՞տն ես... Տո քումն ել, Աթելին
ել... Այս ասելով Աթին թքեց գետնին ու գուրս յե-
կալ Գիգոլի տան չեմքից։

Այդ որփանից վերջնականապես կտրվեցին նրանց
բոլոր հարեանական կապերը։

* * *

Անգան ամիսներ :

Ամեն առաջուտ, յերբ սազատավոր լեռան յետելից
կրակի չեղի եր բացվում և ձյան հատիկների պես
հալվում եյին աստիկը, կոլխոզի կալում զռուում եր
տրակտորն ու բանում եր կալսիչը։ Ամառվա վերջին
որերն եյին։ Հեշանց Աթին վազուց հավաքել եր իր
հալ ու կուտը և ցաք ու ցրիվ կիսատ-պաստ գործերն
եր կարգավորում։ Նա մեկ-մեկ անցնում եր գյուղա-
մեջ ու կանգ առնում կոլխոզի կալի ծայրին։ Սարի
պես բարձրացել եր խորձերի զեղը, իսկ հանդից
բեռնավորված սայլերը շարունակում եյին խորձ
տեղափոխել։

— Այ թե մասիլ ա, հա՞... Խոսում եր իր մեջ Ա-
թին, հետո վերցնում եր գետնից մի հասկ, ինամօռվ
աղաղում ափի մեջ, հաշվում հատիկներն ու նորից
կալը դցում։

Այդ ժամերին բոլորն ել զրադված եյին լինում և
վոչ վոք առանձին ուշադրություն չեր գարձնում նրա
միա։ Մինչդեռ Աթին կուզեր, վոր առատ բերքի մա-
սին իրենից կարծիք ուզես և ինքը զարմանը հայտ-
նի։

Նա մոտենում եր կալսիչին, մանրազնին կերպով
դիտում շարժվող մասերն ու զրուխն որորում։

— Հե՞մ, գլուխը սրա հնարողի զուխնատ... Մերը
չմեռնի փռու... Վոնց ա ուշարի պես լափում...»

— Ես են փոխառության հունարն ե, Աթի քեռի,
մն, վոր առաջին տարին չպրվեցիր... Ժպտում եր

կոմսոմոլ Սեղբակին ու խուրձը յեղանի ծայրն առնելով, թափով գցում կալսիչ ուլուխը:

Մեկ որ ել կոլխազի նախագահ Վասիլը Աթնի հետ յերկար զրուցելուց հետո դժմեց նրան:

— Եղ իրան կարգին Աթի... Ախր դու հարադատ մարդ ես, կոլխոզի գուռուը քեզ համար բաց ե, խեր ըլի, ի՞նչ ես մտածում... Սա համատարածի զուշնեն չի, չիմի ուրիշ տեսակետով ա... Մի մտիկ արա չորս կողմութիւնների նոր տները ծլում են ուկոնների պես: Որ-որի ունեոր կյանք ենք ստեղծում, ունեոր... Գնա, Աթի ջան, կնդանդ հետ մասրահ արա ու հաշիվդ տես...

Աթնի հետ շատ-շատերն եյին զրուցել կոլխոզ գրվելու մասին, բայց բոլորը քամու պես անցել եք նրա ականջի վրայով: Իսկ Վասիլի խոսքերը նա հարգելուր համարեց ու գուշում կախեց:

Ճիշտն ասած, Աթին վարուց եր համոզվել, վոր կոլխոզն աշխատաղ մարդի տեղն ե, բայց խուսափում ե անհարմար եր զգում: Մեկ անդամ նույնիսկ ցանկացած գիմումի պես մի բան գրել: Յերեխայից պահանջեց թուղթ ու մատիտ, ծուռ ու մուռ տառերով բարեց «Յես, Աթի Հեյշան»—սակայն բոպեական դոդ դրաց, պատառեց թուղթն ու դուրս գալով խորը շունչ քաշեց իր կալի ծայրին:

Այս բոլորը մի կողմ, բայց Վասիլի խոսքերն խոկացն լուրջ մտաատնջության մեջ գրին Աթնին: Հենց այդ եր պատճառը, վոր նա տուն գալով նստել եր թափտի ծայրին, մատով չանդուում եր ծնկի վրայի մածնի սպիտակ լաքեն ու մտածում, թէ ինչ ձեռք հայտնի կոլխոզ մտնելու մտադրությունն իր կնոջը՝ Նուրարին:

— Զե, կնիկ, յերջապես սկսեց նա, ժամանակն անցավ... Քաշալ Գիգովի հետ ել խոսել չի լինում... Առաջ, թէ անտոի համար ասում եյի՝ «Տղերք, թէ Գիգովը դոււիր բաց անե, արել վախեց միր կմոնի»

շունքի քաշալ եր, եսոր դբանից ել զրկվեցի: Կոլխոզի մասին եր նրան ջանը: Քաղաք գնաց տոկի տակ ընկավ ու եսոր գլուխը բաց ա ման զալի: Մե, խուն ձուն մազերը բարձրացել են գլխին ու են դեղնած Գիրդուն արեի պես վատվում ա... Հրեն իրեն համար ել նոր տուն պ շինուամ...

Այս խոսակցության վրա տան դուռը դողաց ու նրա հետ ել Աթնի վատները:

— Բէք, բէք տանն ես..., լուից մի բամբ ձայն ու հաստ քուրքի մեջ թաղված Աթելը մտավ ներս:

— Համեցեք, շփոթմեց Աթնի, իսկ նուրաբը պըլ խաչորի ծայրը սեղմեց շուրթերի մեջ:

— Ումն քննում եք...

— Զե, Աթել զայ, ինչ քնելու վախտն ա, — պատասխանեց Աթնի ու ծալքի բարձերից մեկը դբեց թախտին:

— Դեսն անց եյի կենում, ասի մի տեսնեմ ինչ կա, ինչ չկա... Հեյ գիտի, հարսացել ես մեր տղա, լայեղ չես անում գոստութիւն անես... Ասենք, դույն ել չես մեղագոր, ժամանակը վիշացավ...

Աթելը 60-ն անց մարդ եր: Նրա լորձունքու շուրթերի արանքից յերեւում եյին անատամ լնդերքը, իսկ յերբ փակում եր բերանը, թշերի վրա կարմիր բշտիկներ եյին ուռչում և միրուքի մազերը ցցվում եյին մացառի պես: Խոսելացավ ուներ Աթելը, ջրաղացի պես մեկ վոր սկսեց, վերջացավ: Գոմեշի համբերություն եր պետք նրան լուրու համար: Մեկ անդամ Աթնին այնքան ձանձրացավ, վոր Աթելի դեմքի կնծուները, անկանոն փոսերը, գուրս ցցված քիթն ու միրուքը նմանեցրեց երենց հանգամասերին:

Հետո նախատեց իրեն, վոր ալեորի պատիւք վատնատակ ե տալիս:

— Մեր տղա, եսոր մի դալի խաբար եմ իմացել... Ասում են նախոգը շտալու համար բեղլար ազի

աղերանց ունեցած-չունեցածը վերդիր են արել ու ես
երկու որս «աճուր» ա... խոսեց Արելը:

Ճիշտ է, Աթին չհասկացավ «աճուր»-ը, բայց
նմանեցրեց «ուռնացած» բատին և լավ բան չգուշակեց:

— Այսինքն, Արել դայ, վո՞նց թե...

— Այսինքն դրանց առնը քանդվի... Խոսքս չորս
պատի միջին մնա, ժամանակը փչացել ա... Այսինքն
հայացվել պտին, բազար անիլ, մուշտա ծախիլ պը-
ախն կոտերն ու գոմը, փողը տանիլ, թող տիրոջ մե-
րը լաց րիմ... Հսկացար, այսինքն տհենց...

Նա մի պահ լուռ մնաց, հետո բարձրացրեց ուն-
քերից մեկն ու գառը ժապալով շարունակեց.

— Հըմ, բաս նրա աղերանց գլուխը մեռած պտի
ըլիլ, փոր... Արելը ծամծմեց վերջին խոսքները:

Այս ամենը սարսափով լսեց Աթին, գլուխն որո-
րեց, թքոտեց կապուավուն շորթերի վրայի հասա-
բեները, փորոնք կարծեն դուրս ելին դալիս նրա ճա-
պաղած քթի ոռնդերից: Բայց կար մի ավելի մտա-
տանջ ճիճու, փոր նրա միտքը ճծում եր դոմեչի քթա-
ծակը մտած տղրուկի պես: Աթին չեր ուզում, վոր
Արելն սկսի խոսել կոլխոզի մասին: Մեկ փոր պղաս-
րելու յեր նրա միտքը, մեկ ել Աթին չեր կարողանա-
լու ակնաղունձ անել Արելի խոսակցական ջրաղա-
ցում: Բայց չեղավ, Արելը շատ հեռվից սկսեց:

— Ասում են քու նամերի հողը կոլխոզի սահմանն
ա ընկնում, դուզ ա...

— Ավ գիտի... Զեմլեն զեռ եկել չե...

— Ել ինչ ոյ գիտե, — ըրթմնջաց Արելը, կաս-
կածով նայեց Աթինի իջեցրած աշքերին ու շարունա-
կեց զրոյցը, — զուղն ասած, կոլխոզը գեշ բան չի...
համա դե պակասնի դեռ շատ կտն... մին ել մի բա-
նից խելքս բան չի կարում... Ախալեր ես ունեցողը
կուլակ ա, վոտի վրա կանգնողը՝ ուռնացած... Դե-

ննա կոլխոզն ել թամբալանոց ա ելի... Խոսքս չորս
պատի միջին մնա, ժամանակը փախվել ա...

Եսպես յերկար խոսեցին կոլխոզից, ձապոնիայի
կովից, հետո Աթին դուրս յեկավ Աքելի հետ, ուղեկ-
ցեց նրան մինչև կալի ծայրը: Լուսինը կարմրած
դուրս յեկավ սարի յետևից, ու Աթին նուրարին նմա-
նեցրեց տաք թոնրի առաջ կանգնած: Հետո սարսուռ
զգաց լուսնի շառագունած դեմքից ու կովի ահը սրբ-
ուում, տան չեմքից զվասիկոր մտավ ներս:

Սուր խոսակցությունից մի շաբաթ անց ըրջանա-
յին Փինքաժնից մարդիկ յեկան և աճուրդի հանեցին
բեղլար աղի ունեցիւածքը: Հեշտաց Աթին չուզեց տես-
նել այդ, հարեանի եշը վարձեց ու ջրաղացը զնաց՝
թեև ալյուրի կարիք չուներ: Նա գիշերը նուրարից
իմացավ, փոր գյուղացիներից մի քանիսը գնել են
մանր անտառներ, խոլ կոլիկը ու գոմը կոլխոզն ե
վերցրել:

— Վասիլն ենդի՞ յեր... անմիջապես հարց տվեց
Աթին ու սիրտը թպրտաց:

— Կոլխոզի կոնցը. նա ու մնել Քաչալ Գի-
ղուն ելին մեյդան եկել...

— Հա՛... անորոշ բացականչեց Աթին և ալյուրը
տեղափորելիս հայնոյեց Ենեղլար աղի տղաներին, փոր
ուշացրել են պետության հարկը, իսկ ինքը ծանուցա-
գիրն ստանալուց յերեք որ հետո փակեց իր հաշիմնե-
րը:



Երբ աշնան որերն աշնան ճառի տերեների պես
ժեկ-մեկ քամու ընթանն ելին անցնում ու դորշանուռ
ելին հեռաւները-գոմահանդի մաքենան եցախի թվե-
րի տակ դեռ բարձրանում եր սիզախոտը, կավազույն
թումբերի վրա աճում եր գյողղակը,*) գոմերը նորող-

*) Աշնանը բուօնող խոտ ե:

փում ելին ու ժապավենաձև ծուխ բաց թողնում իրենց նեղ յերթիկներից :

Այդ որերին գոմահանդում ստեն դիշեր քուլաքուլա ամպ եր չոքում փառիկությամբ սքսում եր մասրենիներն ու ցախի թփերը : Ու առաջոտայան, յերք ամպը յետ եր քաշիում, ցողի ծանրությունից գլուխն սրորում եր ծեղը-գոմահանդի տավարածը զիտեր, վոր փառիկել են խոտն ու ծեղը, կովը հեշտությամբ գլուխը կթաղի ցախի թփի տակ, իսկ գոմեշը չորացած մասուրը ծամելիս սպիտակ փրփուր կկաթեցնի բերանից :

Սապատափոր յեռան ձափ ուսին գորշ սունկերի խմբի աեօ ծիաբած գոմահանդում այդ որերին միայն Հեշանց Աթին եր պիրատում որն է բուն: Ամեն դարնան նա մեխում եր գոմի դուռը, ցախի խուրձ գնում լիսածակերում: Հարկափոր փայտերն ու կաղնի հաստ տախտակները սայլով տեղափոխում եր գյուղ, հետո գոմի ճակատից մեխած յեղան գանգը խնամքով թաղում եր փեյնում՝ մի նշանավոր աեղ ու տափարը սարը քշում:

Իսկ մյուս աշնանը գոմը կարդի յեր զցում, ամբողջ ձմեռը իր չալ չների ու անասունների հետ որերը մթնեցնում գոմահանդում:

Սապատափոր յեռան ու դյուզի միջև Դավլու սարըն եր ու մի քանի յերկ բլուրներ: Դավլու սարի գոմահանդին նայող զոյի վրայով քանի աշուն անշալ - Աթին չգիտեր, միայն հիշում եր, վոր ապրեներ առաջ իր գոմի գոնից այնտեղի քարակույթերը, շեկ փլամաքներն այինից շատ ելին յերեցում ու ասրի գլխից իջնում եր Քարափի կածանը: Իսկ այժմ ցախի ու մասրենու թփերն անարգել աճել են այնտեղ, բնձենու և բոնչենու արմատները նաւյնիսկ ճեղքել են քարերը, բոյ քաշել, հետո մոխրաղույն աերենեցով ծածկել են քարերն ու Քարափի կածանը:

Վերջին տարիները Աթին մենակ եր լինում գոմահանդում: Նա լավ գիտեր, վոր իր հարկան գոմատերերի մի մասը հեռու լինելու պատճառով քանեղել ե գոմերն ու մոտեցրել դյուզին, իսկ մյուս մասը՝ կոլանգ և զրգել և անասունները տեղափոքել համայնկարն գոմում:

Բայց այս աշնանը Աթին մենակ չմնաց: Յել ահաթե ինչպես: Մեկ անդամ նա գոմահանդից դյուզ զնալիս ծովացավ շրջել Դավլու սարի սասրութը և վորոշեց Քարափի կածանով բարձրանալ վեր: Նուրբարձուղիկել եր աղային, վոր գիշերը գոմում մնա իսկ Աթին գլուխն ու շրբերը լվալու համար դյուզ զնա: Թե յեր ուսերը վայր ու վեր անելով Աթին իջնում եր փոքրիկ ձորակը, գեռ մեծ ճամբին չհասած հիշեց Նուրբարձին, իր փոքրիկ աղջկան ու շուտ տուն հանելու համար վճռեց Քարափի կածանով բարձրանալ: Այդպես ել արեց: Կարեց մեծ ճանապարհը, քարքարու կածանի զիգզագով անցավ առաջ: Կածանի շուրջը բուսած ցախը ծառս եր լինում նրա շալե շարվարից, ծվատված արխալուղի փեշերից, կամ պատռում եր շորերը և կամ պոկվում ու նրա հետ անցնում եր առաջ: Աթին մտազրազ եր, ներքուստ ուրախ ու շատ գանդաղ եր բարձրանում վեր: Հանկարծ կածանի վրա տարածելող սնձենու ճյուղը դիպակ նրա ճակատին ու չանդուեց: Աթին ոտը ցալ դիպակ: Կանդ առավ, ձեռքով չոշափեց ճակատն ու մատների վրա արյուն տեսավ: Արխալուղի փեշերով սրբեց ճակատը և զգուշությամբ չարտնակեց ճանապարհը: Աթին նոր զդաց, վոր վոտքի ջերը հոգնել են, իսկ կածանի կեսը նոր և անցնում: Վարչեցի մի փոքր չունչ առնել: Էստեց կածանի մոտ, բռնչենու տակ: Հետո մեկնեց գոտիկըն ու թիկունքը հենեց ծառին: Նա այնքան եր հոգնել, վոր կարծես մի հեկտար կարծ դարբ հնձած լիներ:

— Մեր ապրուստն ել մի սհենց կածան ա ելի, —

խոսեց ինքն իրեն, —զիշեր-ցերեկ չարչարիում ենք ու ծերը ծերի չի դալի: Վարում ենք, ցանում, արտը հասցնում ու մին ել, կամ յերաշտն առանում, կամ կարկուտը... Համա ուրիշա կոլխողը... Մի արտը, վոր կարկուտը տանի, յերկու հանդի մասիլը ցավը կը ծածկե... Մի խոսքով կոլխողն ել են ներքի դուռ ճամբեն ա... Խոսեց ու շարունակեց ճանապարհը: Դավյու սարի դիմուց մեկ անդամ ել նայեց դոմահանդին: Ռւղեց ձեն տալ տղային, վոր չներին լրավ նա-մի, բայց դոմի առաջ մարդ չնկատելով ծոծրակը քո-րեց ու ծածկվեց սարի յետեր: Կածանն այդպես իշ-նում, նորից միանում եր ճանապարհին: Աթին նկա-տեց, վոր ճանապարհով ինչ վոր մարդիկ են դալիս դյուղից:

— Ովքեր կյինեն, —հարց ամիեց իրեն և արագաց-ըեց քայլերը: Վերջապես յերբ բավական մոտեցել եր յեկվորներին, նկատեց, վոր կոլխողի տղերքն են:

— Բարի աջողում, խեր ընի...

— Եեր ա Աթի քեռի... Պատասխանեց նրանցից մեկն ու ժպատով ավելացրեց, — ուղում ենք հարե-փան դառնանք...

— Վոնց թե... Զարմացավ Աթին...

— Ով զիտի մեր բանը, —վրա բերեց մեկ ուրի-շը, —նոր չինած գոմը հերիք չի անում... Ռւղում ենք քու գոմի մոտի Բեգյար աղի գոմը նորոգենք ու սու-րահ անառունների մի մասը ես ձմեռ հնդի տեղակա-րսնը...

Այդպես ել յեղափ:

Աթին շատ ուրախացավ, վոր Հարեւան յեկավ, բայց տիրեց, յերբ կոլխողի գոմի տավարածը Գիդո-ւը դարձավ:

— Մեր իծանը իրար հետ հանդը չեն դնում, —ա-սեց ու վրուեց ինքնամփում ասպել:

Ամեն յերեկո Աթին կթում եր ցամաքող կովերը, մի թառ կաթը դնում կրակին, հետո զուրս դալով չառ

չներից մեկը կապում եր գոմի լիսածակի մոտ, մյու-սը՝ դրան, փակում եր զուռն ու կրակի շուրջը թիկ-նելով մտածում աշխարհի մասին: Մտածում եր Աթին կոլխողի առատ բերքի, Գիդովի խուճուծ մաղերի, նոր տան մասին, հետո մեկ մեկ ել հիշում եր կնոջ խոսքերը՝ «այ մարդ ուրբերի մաիկ արա, վորդի բա-լակա, թող ընդի կարդի» — և շուռ ու մուռ եր դա-ւիս անելանելի մտածմունքներից:

Կրակի վրայի կաթը թափվում ու իր թշոցով կորում եր նրա մտքի թեր:

★ ★ ★

Խափար գիշեր եր:

Սև չանգն իր մաղիները պոկից գետնից և ո-պակ-ոպակ զալարիելով սովաց ձորն ի վեր: Յերկլե-քում դուռաց ամպը՝ մահաղդի պես սուր և նրա ձայ-նից կարծես ցնցից Աթին խարխուլ գոմը: Զարռ-պանդ ձիավորի լամատի պես վորորից կայծակն ու տարեց վորուոր սարսափ մաղելով զորչ գոմահանդի վրա: Աթին լիսածակի մոտ կապած չալ չունը ծմբաց անձրեի խոշոր կաթիներից և չարժվեց տեղում: Նրա վոտքը կպայ լիսածակի թիթեղին, ու թիթեղը ծը-րունդարավ ընկամ Բհար կոմի պողին: Անձրեի կաթիները բաց լիսածակից աղմկով թափվում եյին ցած, իսկ Աթին կծիկ գարձած ամքել եր բուխարու մաս: Նա ուղում եր գուրս գնալ, փակել լիսածակը, բայց սիրտ չեր անում: Աղիօգորմ ձայնով կաղկանձում եյին կոլխողի չները, նրանց ձայնի մեջ պարսակի կար, ազդող մի բան:

— Գեր ա եկել, —մտածեց Աթին:

Բայց վոչ, նա ճանաչում է զիկահաջը:

Ու վզգում եր քամին... Ինչ վոր բառաչ եր լրս-գում: Կարծես մի խոմք անառուններ հոտառում եյին գետնին թափմած արշաններ որում մոլեզին:

Աթին սարսուռ նկացած մոտուր, ըստ յերեկույ-թին, մի բան եր կապարփում:

Աթին ցերն սկզբում այնաշ ցում եյին կոլխողի

8/06
1000

Հետո կարծես միանդամեց կատաղեցին։ Մա-
սը եյին լինում, ուզում եյին կտրել կապերը։

Աթին մի պահ կրցրեց իրեն։ Անիմաստ չար-
ժումներ կատարեց գոմի խավարում։ Հետո թափ
ավեց իրեն, ինքն ել չիմացավ ինչու՝ բացեց դուռն
ու ներկեց գուրս։ Անձրևի սառ ու հորդուն կաթե-
ներից զգասացավ, նայեց չորս բոլորն ու փշաքաղ-
վեց։ Վերեվում լույսի մի կարմիր շերտ մերթ ճեղ-
քում եր խավարը, մերթ թաղնվում։ Կարծես գեա-
նից մի առասպելական հրեշ իր կարմիր լեզուն մեկ-
նում եր վեր՝ մջապատի խավարը կլանելու հա-
մար։ Աթին հասկացավ բոլորը։ Վասվում եր կոլլո-
գի գոմը։ Նա շփոթված բաց թողեց իր չները, հով-
վական մի ահարկու ճիչ արձակելով սլացավ առաջ։
Շները թողեցին նրան ու աղմուկով իջան ձորը։ Աթին
հասավ վառող գոմին։ Մարմնի ամբողջ թափով հը-
րեց գուռը։ Դուռը կրնկահար յեղուլ։ Նա առանց
մտածելու թաղվեց զամի ծիփ և խավարի մեջ։ Վառ-
գում եր գոմի առասապն, ու կայծերը թափիւմ
եյին զած։ Աթին կույրի նման խարխափելով ճեռքերը
բռում եր գետնին, պատերին։ Ծուխն ասեղի պիս
ծակում եր նրա թոքերը, իսկ կոկորդը սկսում եր
սեղմվել։ Նա ընկայ ցած։ Զախ ճեռքը կուամի ինչ վոր
շորի։ Շորի ուղղությամբ տարածեց ճեռքերն ու Գի-
շորի։ Շորի համարյա քարշ տալով հանեց գոմից։ Իսկ ա-
նասուններն սառն ողի աղդեցության տակ խառնիւ-
ցին իրար և միմիանց հրելով դիմեցին դուրս։

Անձրես շարունակում եր գալ խացուցիչ աղ-
մուկով։ Աթին հաղիվ եր քարշ տալիս Գիդոլի անշըն-
չացած մարմինն ու նրա անցած հանապարհով լիսնային
առվի պիս ջուրը հորդում եր ցած։ Թաց շորերը լո-
րենու հարթ կեղեխ պիս կպել եյին մարմինն, իսկ
տեղող անձրես քամու վայրագ պառույտներից խուրձ
ապտակում եր նրա անպաշտպան դեմքին։ Ա-
թին մէ կերպ ներս մտավ իր գոմն ու Գիդոլին ցած

դրեց բուխարու առաջ։ Հետո հավաքեց գուան մոռ
թափված ցախը, լցրեց բուխարին։ Յախը բուփեյաբար
ձարձատեց ու նրա բոցի մեջ Աթին Գիդոլի արեակո-
լու շապիկը տեսայի։ Այդ ամենը յերազ թվացին նը-
րան։ Վողնաշարը կարծես թուլացավ, աչքերը մթնե-
ցին գրսի խավարի պիս։ Զգաց, վոր ընկնում ե, ճեռ-
քուն ուղեց հենել բուխարու դիմաքարին, բայց չփոթ-
վեց ու թաղեց կրակի մեջ։ Յավ զգաց։ Աչքերը
գտաստացան։ Այս, իր գոմն ե, Գիդոլը, իսկ Գիդոլը
միդն ու չապիկը վաղողված են արյան մեջ։ Աթին
վեցըց կացին ու դիմեց դուրս։

Անձրես դադարում եր աննկատ։ Հետպհետե գոր-
շանում եր խավարն ու նշմարվում եյին զետնին լճա-
ցած ջրերը։ Իսկ չների ձայնը հեռվից եր գալիս,
հեռվի խավարի մութ ծալքերից։ Յեվ կարծես չեն
հաջում, այլ . . .

Աթին ի՞նչ խմանար, զգում են իրար թե՞ . . .
Ամպը գոռաց վերջին անգամ։ Աթին չների ձայնի
ուղղությամբ նետվեց առաջ։ Վազում եր Աթին, ո՞ւր,
ինքն ել չիտաեր, միայն զգում եր, վոր պետք ե վա-
զի, գոռում եր Աթին ահութի ձայնով, ու չալ չները
կատաղում եյին նրա ձայնից։

Կանգ առաջ Աթին մի պահ և նկատեց, վոր չեղ-
վել և չների ձայնի ուղղությունից։ Փոխեց ճանա-
պարհն ու նույն թափով շտապեց առաջ։ Շները նրան
նկատելով թողեցին ինչ վոր սև բան և թուան ա-
ռաջ։ Աթին մոտեցամ նրան։ Մարդ Ե՞ր այդ, քար,
թե՞ հողաթումը։ Կծիկ դարձած ինչ վոր սև գունդ
թաղվել եր ցեխի մեջ։ Աթին վոտքով հրեց և նոր նը-
կատեց ծվեն-ծվեն գարձած շորը։ Ո՞ւմն եր այդ, նա
իհարկե չիմացավ, միայն զգաց, վոր առաջին վաղող
չալ շունը թուել և մեջքին, սուր առամները թաղել
շորի եջ, պլոկել տիրոջը, հետո հասել և մյուս շու-
նը, զգել են չորր, իսկ տերը թաղվել և խավարում։
Աւրախացավ Աթին, բոսեաբար մոռացավ ամեն ինչ։

Կարծես ցեխակոյուլ շորերը լեզու պիտ առնելին ու
ժանրամասն պատմելին այն, ինչ մութն եր, մութ
դիշերի չար դափաղբություն:



Լուսացավ:

Ամպի քուլաները վոչխարի կտրկան հոմի պիտ
կծկվեցին ձորերի յերախներում: Հատ ու կենու ծա-
ռերի տակ խումբ-խումբ հավաքված անասունները
գլխիկոր, ականջները կախած, կիսախուփ աչքերով
մնացել ելին անշարժ: Յետերի վոտների վրա ձևու-
մողնու նման փշաքաղվել ու պոչները սեղմել ելին
վոտների արանքում: Կոլխոզի գոմի տեղ մի հողու-
ծածկ փռու եր առաջացել, վրի ճեղքերից ծուլորեն
ծուխ եր բարձրանում: Սարսափած չներից մեկը միտ-
ելի եր գյուղ, խոկ մյուսը հեռացել եր գոմից ու բըլ-
րի վրա կաղկանձում եր: Միայն Աթին չալ չներն
ելին յերկայն մեկնել դոմի փակ դռան առաջ ու ան-
հանդիսան հայացքով հոկում ելին շուրջը: Նրանցից
մեկը յերեմն ցատկում եր տեղից, մոտենում դոա-
նը, նստում պոչի վրա, անհանդիսան ճանկուսում
դուռը, հրում, ծմբում, սակայն դուռը դարձյալ
մնում եր փակ:



Գյուղից գոմահանող ձեմող ճանապարհի տիզը
թռչում եր սրացող ձիերի վոտների հետ, վորոնց ա-
ռաջից աել ի հետ վաղում եր մի շուն:

Ձիերի բաշց կպած մարդիկ ու վազող շունը հեռ-
ից դիտողին սև գիծ կթվային, կամ նապատակի
յետեղ սրացող ուրու: Գիշերիս սելալից կուտակ-
ված տիղմի մեջ զույդ ակոսների պես գծվում ելին
նրանց հետքերը: Գոմահանդն յերևալու համար մնում
եր մի կոնաձեռ բրուք: Շոնը յետ եր մնում, սակայն
աշխատում եր չթուլացնել իր վազքի թափը: Նրանք
հասան բլրի ուր և հաղիկ քաշեցին ձիերի սանձե-
ք: Ձիերն անհանդիսան պառույտներ արին իրենց ուե-

ղերում, խոկ ձիավորների հայացքները մեխված մհա-
ցին գիմացի սարի ձախ ուսին, վորի վրա մի անսո-
գոր փոս եր առաջացել:

Նրանք շփոթված մի քանի խոսք փոխանակեցին
ու ձիավորներից մեկը անցավ առաջ, խոկ մյուսը՝
նույն ճանապարհով շտապեց գյուղ:

Մի քանի ժամ հետո գոմահանդում անասելի իրա-
րանցում եր տիրում: Մարդիկ չեյին խոսում, խոտն-
գում ելին իրար, հավաքվում խումբ-խումբ ու նո-
րից ցրվում: Բոյորի աչքերի մեջ մի անխոս ցա-
տում եր փայլում: Կոտրել ելին Աթին գոմի գուռն ու
սառել մի զարհութելի պատկերի առջև: Աթին մեջքը
չենի եր պատին, գլուխը թույացած իշեցրել կրծքին
ու համարյա անչնչացել: Խոկ նրա ճնկան վրա՞ յեր-
կու ափերի մեջ սառել եր Գիգոլի այլանդակված դեմ-
քը: Արյունը լերգ-լերգ մակաղել եր նրա շորերի
վրա, շատ տեղ խառնվել ցեխին: Յերկուսն ել կար-
ծես լող ելին տվել ցեխի մեջ:

— Ա. խալիս, —բարձր ճշաց Արելլ... ինչ եք մո-
լորբել, ինչ եք շվարել... սել բերեք... ոչե բան կլի...
Կոլխոզներից մի քանիսը ձիավորի գիմհ-
ցին գյուղ:



Յերկու որ անընդհատ Աթին կծկվում եր վերմա-
կի տակ, անհանդիսան չուռ գալիս մի կողքից մյու-
սը, կոճտացնում ատամները, այրող ջերմության մեջ
անորոշ բացականչություններ անում: Յերեմն ջղած-
դորեն վերմակը շպրտում եր վրայից, ձեռքերը ատ-
րածում՝ կարծես ուզում եր վեր բարձրանալ: Նու-
րարն այդ բոպեններին շունչը պահած, լացակամած
սպասում եր ահավոր բանի, և Աթին շուռ եր գոլիս
մյուս կողքին:

Յերբորդ որը միայն Աթին հանդիսան քնեց և յերբ

բացեց աչքերը, սարսափով նայեց չորս բոլորն ու կնոջից պահանջեց ցեխակոլուլ շորերը։ Նուբարը մի պահ հանկարծակի յեկավ, հետո հարևանի տղայի միջոցով կանչեց Վասիլին։ Վասիլը յերկար չմնաց Աթնի մոտ։ Շորերի մասին կցկառը տեղեկություններ սունայով վերցրեց կոլխոզիկներից մեկին ու ձիավորված շտապեցին դոմաճանու։

Վոչ վոք չեր նկատել, Աթնի գոմի բուխարիկի մոտ դրված ցեխակոլուլ շորը։ Վասիլն անմիջապես վրա թռավ, վերցրեց այն, մի քանի անդամ չուռ ու մուռ տվեց, ազաղեց վրայի ցեխը և նոր տեսավ, վոր այդ այլանդակ զանգվածը մի ծվեն-ծվեն դարձած պինջակ է։ Նա չուպապեց գրպանները գանել։ Յերկար փնտություց հետո, Վասիլը նկատեց, վոր գրպաններից մեկի բերանը փակվել է չորացած ցնիի տակ։ Մաքրեց ցեխն ու ձեռքը գրպանը տանելով, հանեց այնտեղից անձրևի ջրից մաշված, բաց մանիչակաղույն թանաքով ծածկված մի թղթի կոսոր։ Խնամքով բացեց թուղթն ու ամբողջ մի յերեսից հազիվ նշմարեց չորս բառ՝ «դիմում», «Կոմմերս», «գոմբու», «Հույսով եմ»։

Վասիլը մի պահ քարացած մնաց։ Հետո թղթի կտորը ջղաձղորեն ջարդեց ափի մեջ ու զայրությով կրկնեց։

— Նրանք են...

Ուրիշ ուժեր կարող են լինել, յեթե վոչ Բեղլար աղի տղաները, փորոնց կովերն ու գոմը աճուրդի ժամանակ ինքն ու Գիգոլն ելին վերցրել կոլխոզի համար։

★ ★ ★

Անցան որեր։ Մի առավոտ, յերբ կոլխոզի գութանները վարում եյին գորդաձև հովիտն ու Հեջանց Աթնին համայնական դաշտում շաղ եր տալիս աշնանացնի վոսկեհատ սերմը, միլակետի և 4 միլիոնի ուղակում Բեղլար աղի տղաները զնում եյին շրջան։

Նրանց գնալուց մի քանի որ հետո կուլակ Աբելն ել ձերբակալվեց։

★ ★ ★

Սովորություն եր, թե՞ սրտի ցանկություն, վոր Հեջանց Աթնին իրեկնապահին կոլխոզի տավարն ուրթը բերելու ժամանակ նստում եր Սինամ ձորակի գլխին միշտ նույն տեղը, ու հայացքը զցում Աւլու ձորի բերանը։ Հեջանց Աթնին այնպես եր թվում, թե Գիգոլն ել և նատեր այդ նույն տեղը, յերբ հորթարած եր սարերում։ Նույն ե, նայել ձորին ու կլոր քարեր և գլուրել Սինամ ձորակով ցած։

Մտածում եր Աթնին ու դալուկ մտապատկերները հաջորդում ելին իրար։ Մերթ նրա աչքերի առաջ քացվում եր շրջանային ժողովատարանի դահլիճը, լեփ լեցուն մասսայով ու մեղադրական աթոռի վրա հերթով շարժում եյին Բեղլար աղի տղաներն ու Սրելը։ Մերթ հորիզոնի ամպերի վրա գծվում եր Գիգոլի ցեխակուր շապիկը՝ լերգ-լերգ մահաղած արյունով, ու դու Աթնի տկանջին լավում եր Բեղլար աղի տղայի իրուրու ձայնը։

— Հա... մենք... շաշութին եր ելի... Աբել դային մեզ ճամբից հանեց... մութն ընկնում եր, հասանք զոմերը... Գիգոլին դուրս կանչեցինք... ասինք թե հանդիցն ենք զայիս... մի քիչ մնանք զոմում, մինչև անձրևը վառն ըլի... ելավ ելի...

Ոյսպես հիշում եր Հեջանց Աթնին ու անզուսապ զայրությով լցում եր սիրտը։



ՀՀ Ազգային գրադարան



NL0361527

54381

ԳԻՒԸ
50
ԿՈՄ.



Б. СЕЙРАНЯН

ТРОПА ПО СКАЛЕ

На армянском языке

Изд. ГАЗ. „ПРОЛЕТАР.“